ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ (Ձև 6)

Հավելված 9
Ապահովագրական ընկերությունների
հրապարակվող
ֆինանսական հաշվետվությունների
օրինակելի ձևերը և դրանց
լրացման հրահանգը Հավելվածի

Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն ԱՓԲԸ

(ՀՀ, ք. Երևան,0010, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ, 6-11 տարածքներ)

30 հունիս 2019թ.

Հաշվետու ժամանակաշրջանը 2019 թ. 2-րդ եռամսյակ

հազար դրամ

Անվանումը	Ծան.	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	27,326	20,748
ժամկետային ավանդներ բանկերում	9	1,698,522	1,714,739
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
-Ընկերության կողմից պահվող	10	157,927	152,530
-Հետգնման պայմանագրերով գրավադրված	10	676,364	659,191
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		-	-
Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ			
-Ընկերության կողմից պահվող	10	467,031	455,363
-Հետգնման պայմանագրերով գրավադրված	10	205,482	199,860
Ստացվելիք ապահովագրավճարներ		10,669	1,092
Վերաապահովագրական ակտիվներ	14	89,262	51,096
Հիմնական միջոցներ	11	7,511	8,865
Ոչ նյութական ակտիվներ	12	14,821	15,389
Այլ ակտիվներ		12,761	7,896
Ընդամենը ակտիվներ		**3,367,675**	**3,286,768**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Ապահովագրական պահուստներ	13	93,817	55,645
Վերաապահովագրական պարտավորություններ	14	31,669	13,609
Հետգնման պայմանագրերով վճարվելիք գումարներ	15	842,440	844,860
Հարկային պարտավորություններ		11,072	13,550
Այլ պարտավորություններ		18,884	15,198
Հետաձգված հարկային պարտավորություններ		17,710	17,711
Վճարվելիք շահաբաժիններ		-	-
Ընդամենը պարտավորություններ		**1,015,592**	**960,574**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	16	1,500,000	1,500,000
Գլխավոր պահուստ	16	450,000	450,000
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		61,266	60,959
Չբաշխված շահույթ		340,817	315,236
Ընդամենը սեփական կապիտալ		**2,352,083**	**2,326,194**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**3,367,675**	**3,286,768**

Գործադիր տնօրեն՝ Արմեն Շահնազարյան

Գլխավոր հաշվապահ՝ Լիլիթ Վարոսյան

Հավելված 12
Ապահովագրական
ընկերությունների
հրապարակվող
ֆինանսական
հաշվետվությունների
օրինակելի ձևերը և դրանց
լրացման հրահանգը
Հավելվածի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՁԵ 7գ)

Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն ԱՓԲԸ

(ՀՀ, ք. Երևան,0010, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ, 6-11 տարածքներ)
30 հունիս 2019թ.

Հաշվետու ժամանակաշրջանը 2019 թ. 2-րդ եռամսյակ

հազար դրամ

Անվանումը	Ծան.	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջան (աճողական	Նախորդ տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական)
Հաշվեգրած ապահովագրավճար		35,092	50,213	5,758	18,827
Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստում		(7,261)	1,347	3,895	121
Դադարեցված ապահովագրավճարների գծով ապահովադիրներին վերադարձվելիք զուտ գումարներ գումարներ		-		-	-
Ապահովագրական հատուցումներ		-	(2,207)	(9,144)	(9,144)
Զուտ կարգավորման ծախսեր		-			
Տեխնիկական պահուստների ձևավորումից/հակադարձումից զուտ արդյունքներ		(4,095)	(6,997)	5,843	320
Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներից զուտ եկամուտներ		-		-	-
Ապահովագրական գործունեությունից հասույթ		**23,736**	**42,356**	**6,352**	**10,124**
Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ		(31,669)	(45,278)	(5,182)	(16,944)
Վերաապահովագրողի մասը ապահովագրական հատուցումներում		-	1,987	8,230	8,230
Վերաապահովագրողների մասը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում		7,367	423	(3,506)	(110)
Վերաապահովագրողներից ստացվելիք պարգևավճարներ և այլ վճարներ		6,756	9,819	1,166	3,812
Ապահովագրական գործունեության արդյունք	**5**	**6,190**	**9,306**	**7,060**	**5,112**
Տոկոսային եկամուտ	6	79,512	157,682	81,301	160,432
Տոկոսային ծախս	6	(15,733)	(31,347)	(15,602)	(29,849)
Զուտ տոկոսային եկամուտ		**63,779**	**126,334**	**65,699**	**130,583**
Կոմիսիոն և այլ վճարումների տեսքով ծախսեր		(40)	(120)	(77)	(126)
Անձնակազմի գծով ծախսեր		(24,658)	(51,222)	(28,366)	(54,804)
Հիմնական միջոցների վարձակալության ծախսեր		(5,183)	(10,365)	(5,183)	(10,365)
Հիմնական միջոցների մաշվածություն		(1,921)	(7,956)	(1,568)	(3,144)
Այլ եկամուտներ/ծախսեր		(6,372)	(9,535)	(7,419)	(12,098)
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը		**31,797**	**56,443**	**30,144**	**55,158**
Շահութահարկի գծով ծախս	7	(6,216)	(10,883)	(5,704)	(10,452)
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ		**25,581**	**45,560**	**24,440**	**44,706**
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման ճշգրտումներ		385	(6,307)	(7,641)	(3,321)
Շահութահարկի ծախս (փոխհատուցում)	7	(77)	1,261	1,528	664
Այլ համապարփակ եկամուտ հաշվետու ժամանակաշրջանի համար, առանց շահութահարկի		**308**	**(5,046)**	**(6,113)**	**(2,657)**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ		**25,889**	**40,514**	**18,327**	**42,049**

Գործադիր տնօրեն՝ Արմեն Շահնազարյան

Գլխավոր հաշվապահ՝ Լիլիթ Վարոսյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 8)

Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն ԱՓԲԸ
(ՀՀ, ք. Երևան,0010, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ, 6-11 տարածքներ)
30 հունիս 2019թ.
Հաշվետու ժամանակաշրջանը 2019 թ. 2-րդ եռամսյակ

Հավելված 13
Ապահովագրական ընկերությունների
հրապարակվող ֆինանսական
հաշվետվությունների օրինակելի
ձևերը և դրանց լրացման հրահանգը
Հավելվածի

հազար դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված Շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,500,000**	**450,000**	**74,265**	**254,570**	**2,278,835**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ				89,973	**89,973**
Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ եկամուտ, առանց շահութահարկի			(7,954)		**(7,954)**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ			**(7,954)**	**89,973**	**82,019**
Հայտարարված և վճարված շահաբաժիններ	-	-		(49,286)	**(49,286)**
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,500,000**	**450,000**	**66,311**	**295,257**	**2,311,568**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ				45,560	**45,560**
Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ եկամուտ, առանց շահութահարկի			(5,045)		**(5,045)**
Հայտարարված շահաբաժիններ					-
Մնացորդը 2019թ. հունիսի 30-ի դրությամբ	**1,500,000**	**450,000**	**61,266**	**340,817**	**2,352,083**

Գործադիր տնօրեն՝ Արմեն Շահնազարյան

Գլխավոր հաշվապահ՝ Լիլիթ Վարոսյան

Հավելված 14
Ապահովագրական ընկերությունների
հրապարակվող ֆինանսական
հաշվետվությունների օրինակելի
ձևերը և դրանց լրացման հրահանգը
Հավելվածի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ (ՈՒՂՂԱԿԻ ՄԵԹՈԴ) (Ձև 9ա)

Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն ԱՓԲԸ

(ՀՀ, ք. Երևան,0010, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ, 6-11 տարածքներ)
30 հունիս 2019թ.
Հաշվետու ժամանակաշրջանը 2019 թ. 2-րդ եռամսյակ

հազ. դրամ

Անվանումը	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև նախորդ տարվա ավարտը
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված ապահովագրավճարներ	42,132	74,981
Փոխանցված վերաապահովագրավճարներ և այլ վճարներ վերաապահովագրողին	(39,012)	(25,319)
Վճարված հատուցումներ	(2,184)	(15,321)
Վերաապահովագրողներից ստացված գումարներ հատուցումների մասով	-	4,218
Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներից զուտ մուտքեր	(5,820)	(6,968)
Այլ եկամուտներ	67	-
Աշխատավարձի վճարում	(34,543)	(81,646)
Վճարումներ բյուջե	(36,824)	(53,361)
Կոմիսիոն և այլ ծախսեր	(15,518)	(47,493)
Ստացված տոկոսներ	160,101	331,426
Տոկոսների մարում	(32,572)	(62,642)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	**35,826**	**117,875**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ժամկետային ավանդների մարումից մուտքեր	253,000	1,046,000
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների մարումից մուտքեր	-	-
Հակադարձ հետգնման պայմանագրերից դրամական հոսքեր	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-	-
Հիմնական միջոցների ձեռքբերում և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,244)	(1,452)
Ժամկետային ավանդների ներդրում բանկերում	(298,904)	(1,097,900)
Հետգնման պայմանագրերով գործարքներից զուտ դրամական հոսքեր	(5,389)	3,869
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(52,537)**	**(49,484)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում		
Ներդնում գլխավոր պահուստում		
Շահաբաժինների վճարում	-	(49,286)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**-**	**(49,286)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	**(16,711)**	**19,105**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ,	**44,021**	**25,466**
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**16**	**(550)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**27,326**	**44,021**

Գործադիր տնօրեն՝ Արմեն Շահնազարյան

Գլխավոր հաշվապահ՝ Լիլիթ Վարոսյան

2019թ. հունիսի 30-ին ավարտված եռամսյակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

«Հայաստանի ապահովագրական արտահանման գործակալություն» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2013 թ. հոկտեմբերի 23-ին և Հայաստանի Հանրապետության կողմից՝ արտահանման խթանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության շրջանակներում, նպատակ ունենալով արտահանողներին տրամադրել ապահովագրություն մատակարարված ապրանքի և մատուցված ծառայության դիմաց օտարերկրյա գնորդի կողմից չվճարման հետևանքով կրած ֆինանսական վնասներից, նպաստել մատչելի և հասանելի ֆինանսական ռեսուրսների տրամադրմանը փոքր և միջին ձեռնարկություններին, նպաստել արտահանման առևտրային ռիսկերի ապահովագրության մասնավոր շուկայի զարգացմանը:

Ընկերության միակ բաժնետեր է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը: Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվում է հետևյալ նախարարություններին՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն (20%), ՀՀ ֆինանսների նախարարություն (20%), ՀՀ արտաքին գործերի նախարարություն (20%), ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (20%) և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն (20%): Ընկերությունը գրանցվել է 2013 թ. նոյեմբերի 27-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N0011 արտոնագրային համարով:

Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է ք. Երևանում՝ Նալբանդյան 48/1, «Սախարով» բիզնես կենտրոն հասցեով:

2013թ., իր հիմնադրումից հետո Ընկերությունը մշակել և շարունակում է մշակել իր ապահովագրական ծառայությունը ապահովագրական շուկայում: 2015թ. Ընկերությունը առաջին անգամ թողարկել է իր ապահովագրական ծառայությունը՝ արտահանողներին առաջարկելով օտարերկրյա գնորդների կողմից վճարման պարտավորությունների չկատարման ռիսկի ապահովագրություն: Ընկերությունը շարունակում է զարգացնել իր ապահովագրական ծառայությունների շրջանակը՝ համահունչ իր ռազմավարական առաջնահերթությունների և նպատակների:

2. Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ

Պատրաստման հիմունքները

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության սկզբունքով և կշարունակի գործել տեսանելի ապագայում:

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն էլ Ընկերության գործառնական արժույթն է և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչպես ներկայացված է ստորև հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:
Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ակտիվների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցները այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ

այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ վարձակալության գործարքներից, որոնք նկարագրված են ՀՀՄՍ 17-ում և չափումներից,

որոնք թեև համանման են իրական արժեքին, սակայն իրական արժեքով չեն, մասնավորապես զուտ իրացվելի արժեք՝ ՀՀՄՍ 2-ի համաձայն կամ օգտագործման արժեք՝ ՀՀՄՍ 36-ի համաձայն:

Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից իրական արժեքով չափումները դասակարգվում են երեք մակարդակի՝ հիմք ընդունելով իրական արժեքով չափումների ընթացքում օգտագործված ելակետային տվյալների դիտարկելիության աստիճանը և իրական արժեքի ամբողջությամբ չափման ժամանակ օգտագործված տվյալների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված), որոնք Ընկերությունը կարող է գնահատել չափման ամսաթվի դրությամբ,
- Մակարդակ 2 - Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են թե ուղղակիորեն և թե անուղղակիորեն, և
- Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա:

Ընկերությունը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում, իր հաշվապահական գրառումները վարում է ըստ հաշվապահական հաշվառման տեղական օրենսդրության պահանջների: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են տեղական օրենսդրության համաձայն վարվող հաշվապահական գրառումների հիման վրա և ճշգրտվել՝ ՖՀՄՍ պահանջներին համապատասխանություն ապահովելու համար:

Ընկերությունն ընդհանուր առմամբ ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

Գործառնական արժույթ . Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացում է իր գործունեությունը («Գործառնական արժույթ»): Ընկերության գործառնական արժույթը ՀՀ դրամն է:

Հաշվանցում. Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Ընկերության հաշվապահական քաղաքականության մեջ:
Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև:

Ապահովագրության պայմանագրեր

(i) Պայմանագրերի դասակարգում

Ապահովագրության պայմանագիրն այն պայմանագիրն է, ըստ որի Ընկերությունը պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին կամ այլ շահառուին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի կամ այլ շահառուի վրա: Ապահովագրական ռիսկը չի ներառում ֆինանսական ռիսկը: Ֆինանսական ռիսկը հետևյալ նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ սահմանված տոկոսադրույք, արժեթղթի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկունակություն կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում, այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին: Ապահովագրության պայմանագրերը կարող են փոխանցել նաև որոշ ֆինանսական ռիսկ: Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը կարող է Ընկերության կողմից նշանակալի հատուցումների վճարման պատճառ դառնալ: Պայմանագիրը, որը դասակարգվում է որպես ապահովագրության պայմանագիր, մնում է որպես ապահովագրության

պայմանագիր, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց ժամկետը լրանում է: Պայմանագրերը, որոնց համաձայն Ընկերությանն ապահովադրից փոխանցվող ռիսկը նշանակալի չէ, դասակարգվում են որպես ֆինանսական գործիքներ:

(ii) Պայմանագրերի ճանաչում և չափում

Ընդհանուր ապահովագրական պայմանագրեր

Ապահովագրավճարներ

Համախառն ապահովագրավճարները ներառում են տարվա ընթացքում կնքված պայմանագրերից ստացված ապահովագրավճարները, անկախ այն փաստից, թե արդյոք դրանք ամբողջությամբ կամ մասնակի վերաբերում են հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններին: Ապահովագրավճարները բացահայտվում են համախառն հիմունքով՝ ներառելով միջնորդներին վճարվելիք կոմիսիոն վճարները և բացառելով ապահովագրավճարների գծով հարկերը և տուրքերը: Ստացված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես հասույթ: Ընկերությունն ապահովագրավճարները վաստակում է ռիսկն իր վրա վերցնելու ամսաթվից, փոխհատուցման ժամանակաշրջանի ընթացքում՝ կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարները ճանաչվում են որպես ծախս՝ կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարների այն մասը, որը չի ճանաչվում որպես ծախս, հաշվառվում է որպես կանխավճար:

Ապահովագրության պայմանագրերի չեղարկում

Ապահովագրության պայմանագիրը չեղարկվում է, եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ապահովադիրը չի ցանկանում կամ ի վիճակի չէ շարունակել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների վճարումը: Այս իսկ պատճառով, չեղարկվում են հիմնականում ապահովագրության այն պայմանագրերը, որոնցով նախատեսված ապահովագրավճարները վճարվում են մասնաբաժիններով՝ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: Չեղարկումները հաշվառվում են համախառն վճարված ապահովագրավճարներից առանձին:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստ

Չվաստակած ապահովագրավճարների պահուստն իրենից ներկայացնում է համախառն ապահովագրավճարների այն մասը, որն ակնկալվում է վաստակել հաջորդ կամ հետագա ֆինանսական տարիներին: Չվաստակած ապահովագրավճարների պահուստը հաշվարկվում է յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի համար առանձին ՝ օգտագործելով համամասնության մեթոդն օրական կտրվածքով: Չվաստակած ապահովագրավճարների պահուստը ճանաչելիս հաշվետու ամսաթվի դրությամբ ապահովագրության պայմանագրերի ակնկալվող չեղարկումները հաշվի չեն առնվում:

Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստ

Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստների նպատակն է ճանաչել գնահատած արժեքները (այդ թվում՝ ծախսերը) կորուստների ամբողջությամբ կարգավորման դեպքում: Քանի որ ոչ մի տեղեկատվություն առկա չէ կրած կորուստների վերաբերյալ, Ընկերությունը ապավինում է իր փորձին՝ հաշվի առնելով ընթացիկ միտումները և այլ համապատասխան գործոններ: Ներկայացված, սակայն չկարգավորված բոլոր պահանջների գծով պահուստը գնահատվում է՝ հիմք ընդունելով ակնկալվող ծախսերի ակտուարական և վիճակագրական կանխատեսումները կորուստների լիարժեք կարգավորման և կառավարման համար: Վերլուծությունը կատարվում է՝ հիմք ընդունելով ներկա փաստերը և պայմանները, կանխատեսումները, ապագա գնաճի գնահատված մակարդակը և այլ սոցիալ-տնտեսական գործոններ: Գործոնները, որոնք օգտագործվում են կրած, սակայն չներկայացված կորուստների պահուստի կանխատեսվող չափը որոշելու համար, ներառում են նաև տվյալներ կորուստների հաճախականության դինամիկայի, ինչպես նաև կորստի հաշվետվությունների ներկայացման ժամկետների ուշացման վերաբերյալ: Ժամանակ առ ժամանակ, երբ հասանելի են դառնում նոր տեղեկություններ (այդ թվում՝տեղեկատվություն փաստացի կորուստների վերաբերյալ), ապա վերլուծվում և քննարկվում են Ներկայացված, սակայն չկարգավորված բոլոր պահանջների գծով պահուստները:

Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով ակնկալվող վերականգնումները ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ: Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով վերականգնումների գնահատման համար կիրառվում է չվճարված պահանջների գնահատման համար օգտագործվող նմանատիպ մեթոդը:

Նախորդ տարիներում ձևավորված պահանջների գծով պահուստների գումարների ճշգրտումներն արտացոլվում են այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որի ընթացքում կատարվել են ճշգրտումները, և առանձին բացահայտվում են՝ էական լինելու դեպքում: Կիրառվող մեթոդները և կատարված գնահատումները վերանայվում են կանոնավոր հիմունքով:

Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստ

Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստի գնահատումը որպես կանոն ենթադրում է ավելի մեծ անորոշություն, քան արդեն իսկ տեղեկացված պահանջների գնահատումը, երբ առկա է ավելի մեծ ծավալով տեղեկատվություն: Փաստացի, սակայն չներկայացված պահանջները հաճախ հայտնի են դառնում Ընկերությանը պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո որոշ ժամանակ անց: Ընկերության պորտֆելի կարճաժամկետ բնույթի պատճառով, պահանջների բավականին մեծ մասը մարվում է պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո մեկ տարվա ընթացքում:

Պահանջները, որպես կանոն, գնահատվում են առանձին և չափվում են առանձին դեպքերի հիմունքով, կամ կանխատեսվում են առանձին՝ այս խոշոր պահանջների զարգացումներ և գործողության ոլորտի հետ կապված հնարավոր խեղաթյուրված հետևանքները հաշվի առնելու համար:

Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստները սկզբնապես գնահատվում են համախառն հիմունքով, և իրականացվում է առանձին հաշվարկ վերաապահովագրության փոխհատուցումների չափը որոշելու համար:

Ենթադրություններ

Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի պահուստների չափման վրա ամենամեծ ազդեցությունն են գործում պատահարների առավել վաղ տարիների համար ակնկալվող վնասի հարաբերակցությանը վերաբերող ենթադրությունները: Ակնկալվող վնասի հարաբերակցությունը ակնկալվող պահանջների և վաստակած ապահովագրավճարների հարաբերակցությունն է: Պարտավորության ընդհանուր չափը որոշելիս դրամական միջոցների ապագա հոսքերի կանխատեսումը ներառում է այն չափորոշիչների գնահատված արժեքը, որոնք կարող են ազդեցություն ունենալ առանձին պահանջի վրա (օրինակ՝ պահանջների հաճախականությունը, փոխհատուցման ժամկետները, ապահովագրվող պատահարի տեղի ունենալու ամսաթվի և պահանջի մարման միջև ընկած ժամանակահատվածը):

Զգայունության վերլուծություն

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության գործունեության կարճաժամկետ բնույթի պատճառով, Ընկերության պորտֆելը զգայուն է հիմնականում ակնկալվող վնասի հարաբերակցության փոփոխության նկատմամբ: Ընկերությունը ճշգրտումներ է կատարում ապահովագրական սակագների գծով, ելնելով այս փոփոխականների վերջին փոփոխություններից՝ վերջին միտումները հաշվի առնելու համար:

(iii) Վերաապահովագրություն

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կիրառում է վերաապահովագրություն՝ վերաապահովագրողներին ռիսկի մասնակի փոխանցման միջոցով՝ իր հնարավոր զուտ վնասը սահմանափակելու նպատակով: Վերաապահովագրության համաձայնագրերը չեն ազատում Ընկերությանն ապահովադիրների հանդեպ ստանձնած իր պարտականություններից:

Փոխանցված ապահովագրավճարները և փոխհատուցված օգուտները ներկայացվում են շահույթում կամ վնասում և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ համախառն հիմունքով:

Վերաապահովագրության գծով ակտիվները ներառում են փոխանցված ապահովագրության գծով պարտավորությունների դիմաց վերաապահովագրական ընկերություններից ստացվելիք մնացորդները: Վերաապահովագրությունից վերականգնման ենթակա գումարները գնահատվում են նույն մեթոդով, ինչը կիրառվում է չվճարված պահանջների պահուստի կամ վերաապահովագրության պայմանագրի հետ կապված մարված պահանջների գնահատման համար:

Վերաապահովագրության գծով ենթադրվող ապահովագրավճարները ճանաչվում են որպես հասույթ և հաշվառվում են այնպես, ինչպես կհաշվառվեին, եթե վերաապահովագրությունը համարվեր ուղղակի բիզնես՝ հաշվի առնելով վերաապահովագրվող բիզնեսի ծառայությունների վերադասակարգումը:

Վերաապահովագրության պայմանագրերի շրջանակներում փոխհատուցման ենթակա գումարները գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ իրեն հասանելիք բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք, և այդ դեպքն արժանահավատորեն չափելի ազդեցություն ունի այն գումարների նկատմամբ, որոնք Ընկերությունը կստանա վերաապահովագրողից: Որպես վերաապահովագրության գծով ակտիվներ հաշվառվում են միայն այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք նախատեսում են նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում: Այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք չեն նախատեսում նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում, հաշվառվում են որպես ֆինանսական գործիքներ:

(iv) Հետաձգված ձեռքբերման ծախսումներ

Ձեռքբերման ծախսումները, որոնք իրենցից ներկայացնում են ապահովագրական գործակալներին և բրոքերներին վճարված կոմիսիոն գումարները և վերաապահովագրության գծով կոմիսիոն վճարներ, հետաձգվում ու ամորտիզացվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում Ընկերությունը վաստակում է համապատասխան ապահովագրավճարները: Հետաձգված ձեռքբերման ծախսումները նվազեցվում են այն կոմիսիոն գումարների չափով, որոնք ենթակա են վճարման ապագա ժամանակաշրջաններին վերաբերող ժամկետանց ապահովագրության պայմանագրերի հետ կապված:

(v) Պարտավորությունների համարժեքության ստուգում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է պարտավորությունների համարժեքության ստուգում, որոշելու համար, թե արդյոք ապահովագրության պայմանագրերի պահուստները (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները և ոչ նյութական ակտիվները, ինչպիսիք են ձեռնարկատիրական գործունեության միավորման կամ պորտֆելի փոխանցման արդյունքում ձեռք բերված ապահովագրության պայմանագրերը) համարժեք են: Այս ստուգումների համար օգտագործվում են ապագա պայմանագրային դրամական հոսքերի և հարակից ծախսերի, այդ թվում՝ պահանջների մարման ծախսերի, ապահովագրության պայմանագրերի պահուստներն ապահովող ակտիվներից ստացված ներդրումային եկամտի ներկայիս լավագույն գնահատականը: Պակասորդի բացահայտման դեպքում համապատասխան հետաձգված ձեռքբերման ծախսումները և համապատասխան ոչ նյութական ակտիվները արժեզրկվում են, իսկ անհրաժեշտության դեպքում ձևավորվում է լրացուցիչ պահուստ: Պակասորդը ճանաչվում է հաշվետու տարվա շահույթում կամ վնասում:

(vi) Ապահովագրության գծով ստացվելիք և վճարվելիք գումարներ

Ապահովադիրներին, գործակալներին և վերաապահովագրողներին վճարվելիք և նրանցից ստացվելիք գումարներն իրենցից ներկայացնում են ֆինանսական գործիքներ և ներառվում են ապահովագրության գծով ստացելիք և վճարվելիք գումարների կազմում, այլ ոչ՝ ապահովագրության պայմանագրերի պահուստներում կամ վերապահովագրության գծով ակտիվների կազմում: Ընկերությունը արժեզրկման տեսանկյունից կանոնավոր կերպով վերանայում է ապահովագրության գծով ստացվելիք գումարները: Արժեզրկման գծով հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է սույն ծանոթագրության համապատասխան բաժնում:

Տոկոսային եկամուտների և ծախսերի ճանաչումը

Ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և եկամտի գումարը կարող է արժանահավատորեն չափվել: Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդն է:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների

ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը:

Այն դեպքերում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի արժեքի նվազում արժեզրկումից կորստի հետևանքով, տոկոսային եկամուտն այդուհետև ճանաչվում է՝ կիրառելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել էր արժեզրկումից կորուստը չափելու նպատակով ապագա դրամական հոսքերը զեղչելիս:

Իրական արժեքով չափվող ակտիվների գծով ստացված տոկոսները դասակարգվում են որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների), համապատասխանաբար ավելացվում կամ նվազեցվում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից, սկզբնական ճանաչման պահին: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից, նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

<u>Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:</u> Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ (i) այն պայմանական հատուցում է, որը կարող է վճարվել ձեռքբերողի կողմից որպես գործարար միավորման մաս, որի հանդեպ կիրառվում է ՖՀՄՍ 3-ը, (ii) պահվում է վաճառքի համար կամ (iii) նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով,

Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են եկամուտներում կամ ծախսերում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի, վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է ներկայացված եղանակով (տես ծան. 21):

<u>Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ.</u> Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Ընկերությունն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե Ընկերությունը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակազրկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Ընկերությանը կարգելվեր ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում դասակարգել որևէ ֆինանսական ակտիվ որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

<u>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:</u> Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես (ա) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ (գ) վարկեր և դեբիտորական պարտքեր:

Ընկերության կողմից պահվող հետգնվող ցուցակված պարտատոմսերը, որոնք գնվում և վաճառվում են ակտիվ շուկայում, դասկարգվում են որպես վաճառքի համար մատչելի և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ներկայացվում իրական արժեքով: Ընկերությունը նաև ներդրումներ ունի չցուցակված բաժնետոմսերում, որոնք չեն վաճառվում ակտիվ շուկայում, սակայն նույնպես դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ներկայացվում իրական արժեքով (քանի որ ղեկավարությունը կարծում է, որ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել): Իրական արժեքը որոշվում է ներկայացված եղանակով (տե՛ս ծան. 21): Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները, որոնք վերաբերում են արտարժույթի փոխարժեքի փոփոխություններին, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ հաշվարկված տոկոսային եկամուտը և վաճառքի համար մատչելի բաժնային գործիքներից ստացված շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ներկայացվում ներդրումների վերագնահատման պահուստ հոդվածում: Երբ ներդրումն օտարվում է կամ համարվում է արժեզրկված, ներդրումների վերագնահատման պահուստի հոդվածում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է այդ արտարժույթով և փոխարկվում հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ գործող սփոթ փոխարժեքով: Շահույթում կամ վնասում ճանաչված՝ արտարժույթի փոխարժեքից օգուտները և վնասները որոշվում են դրամային ակտիվի ամորտիզացված արժեքի հիման վրա: Արտարժույթի փոխարժեքից այլ օգուտները և վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Վաճառքի համար մատչելի սեփական կապիտալում ներդրումները, որոնք չունեն ակտիվ շուկայում գնանշված շուկայական արժեք և որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, չափվում են ինքնարժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում, դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

Արժեթղթերի հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության գործարքներ. Սովորական գործունեության ընթացքում Ընկերությունը կնքում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետգնման (ռեպո), ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի (հակադարձ ռեպո) պայմանագրեր: Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրերը օգտագործվում են Ընկերության կողմից որպես գանձապետական կառավարման տարր:

Ռեպո համաձայնագիրն իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը գումարած տոկոսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ:

Հակադարձ հետգնման պայմանագրերով ձեռքբերվող ակտիվները ֆինանսական հաշվետվություններում գրանցվում են որպես արժեթղթերով և այլ ակտիվներով ապահոված ավանդներում ներդրված միջոցներ:

Ընկերությունը կնքում է արժեթղթերի հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Հետգնման գործարքների ստանդարտ պայմաններով Հայաստանի Հանրապետությունում, գրավառուն իրավունք ունի վաճառել կամ վերագրավադրել գրավի առարկան, պայմանով որ դրա դիմաց կվերադարձնի համարժեք արժեթղթեր՝ գործարքի փակման ամսաթվին:

Արժեթղթերի փոխանցումը կոնտրագենտներին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխացվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. Ֆինանսական ակտիվները, բացի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների հայտնաբերման նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրման գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված՝ ցուցակված կամ չցուցակված կապիտալի ներդրումներում արժեթղթի իրական արժեքի զգալի կամ տևական անկումը իր ինքնարժեքից համարվում է արժեզրկման օբյեկտիվ վկայություն:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները.

- թողարկողի կամ պայմանագրային կողմի զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի նախաձեռնումը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են վարկերը և դեբիտորական պարտքերը, ակտիվները, որոնք ըստ գնահատականների առանձին արժեզրկված չեն, ի լրումն գնահատվում են նաև խմբային արժեզրկման տեսանկյունից: Դեբիտորական պարտքի պորտֆելի արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող է համարվել Ընկերության նախկին փորձը վճարումների հավաքագրման գծով, հետաձգված վճարումների թվի աճը

պորտֆելում ինչպես նաև ազգային կամ տեղական մակարդակում դիտարկելի փոփոխությունները, որոնք կարող են հանգեցնել դեբիտորական պարտքի անհավաքագրելիության:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով ծախսի գումարը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ զեղչված ֆինանսական ակտիվի համար սկզբնապես սահմանված տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով ծախսի գումարը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ զեղչված շուկայում համանման ֆինանսական ակտիվի եկամտաբերության դրույքաչափով: Նման արժեզրկումից կորուստը ենթակա չէ հակադարձման հաջորդ ժամանակաշրջաններում:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ ակտիվը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են եկամուտներում կամ ծախսերում:

Երբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես տվյալ ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար, այն դեպքում, եթե հաջորդող ժամանակարջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է և նվազեցումը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցող դեպքերի, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով այնքանով, որքանով արժեզրկման ամսաթվի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ամորտիզացված արժեքն այն դեպքում, եթե այդ արժեզրկումը ճանաչված չլիներ:

Վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերի գծով արժեզրկումից կորուստները, որոնք նախկինում ճանաչվել են շահույթում կամ վնասում, չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով: Արժեզրկումից կորստին հաջորդող՝ իրական արժեքի ցանկացած աճ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և ներկայացվում ներդրումների վերագնահատման պահուստ հոդվածում:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի գծով արժեզրկումից կորուստները հետագայում հակադարձվում են շահույթի կամ վնասի միջոցով, եթե ներդրման իրական արժեքը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկումից կորստի ամսաթվին հաջորդող դեպքի:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվում: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

Ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Եթե Ընկերության շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Ընկերությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ

մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

Ֆինանսական պարտավորություններ և թողարկված բաժնային գործիքներ

Որպես պարտք կամ սեփական կապիտալ դասակարգումը. Ընկերության կողմից թողարկված պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություն կամ սեփական կապիտալ՝ ելնելով պայմանագրային դրույթների էությունից և ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի սահմանումից:

Բաժնային գործիքներ. Բաժնային գործիքը ցանկացած պայմանագիր է, որը վկայում է Ընկերության ակտիվներում մասնակցության մնացորդը՝ հանած բոլոր պարտավորությունները:

Ընկերության կողմից իր իսկ բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում է և նվազեցվում անմիջականորեն սեփական կապիտալից: Ընկերության կողմից իր իսկ բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ չեղարկման դեպքում շահույթում կամ վնասում օգուտ կամ վնաս չի ճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթում կամ վնասում իրական արժեքով չափվող կամ այլ ֆինանսական պարտավորություններ:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը (i) պահվում է վաճառքի համար, (ii) այն պայմանական հատուցում է, որը կարող է վճարվել ձեռքբերողի կողմից որպես գործարար միավորման մաս, որի հանդեպ կիրառվում է ՖՀՄՍ 3-ը, կամ (iii) դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկու խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են եկամուտներում կամ ծախսերում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի, վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով (տես՝ ծան. 21):

Այլ ֆինանսական պարտավորություններ: Այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով ծախսերը:

Այլ ֆինանսական պարտավորությունները այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, իսկ տոկոսային ծախսերը ճանաչվում են արդյունավետ տոկոսաբերության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկի ստացումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) պարտքային գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր . Ֆինանսական երաշխավորության պայմանագիրն այն պայմանագիրն է, որով թողարկողից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի սկզբնական կամ փոփոխված պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով:

Ընկերության կողմից թողարկված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը՝ չափվում են իրենց իրական արժեքով և շահույթում կամ վնասում իրական արժեքով չափվող չհամարվելու դեպքում այնուհետև չափվում են հետևյալ մեծություններից առավելագույնով՝

- Պայմանագրով սահմանված պարտավորության գումարը՝ որոշված ՀՀՄՍ 37 *Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ* ստանդարտի համաձայն
- Սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած հասույթի ճանաչման քաղաքականության համաձայն ճանաչված՝ կուտակված արժեզրկումը, եթե դա կիրառելի է:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում: Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն այն դեպքում, եթե վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված հիմնականում բոլոր ռիսկերն ու հատույցները փոխանցվում են վարձակալին: Մնացած այլ վարձակալության տեսակները համարվում են գործառնական վարձակալություններ:

Ընկերությունը որպես վարձատու. Ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձակալներից ստացվելիք գումարները ճանաչվում են որպես դեբիտորական պարտք՝ Ընկերության կողմից վարձակալությունում կատարած զուտ ներդրման գումարի չափով: Ֆինանսական վարձակալությունից եկամուտը բաշխվում է հաշվետու ժամանակահատվածներում այնպես, որ այն արտացոլի Ընկերության՝ վարձակալությունում կատարված և դեռևս չմարված զուտ ներդրման գծով մշտական պարբերականությամբ տեղի ունեցող եկամտաբերությունը:

Ընկերությունը որպես վարձակալ. Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները սկզբնապես ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ իրենց իրական արժեքով՝ վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ, կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե այն ավելի ցածր է: Վարձատուի հանդեպ համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձավճարները համամասնորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալության գծով պարտավորության նվազեցման միջև այնպես, որ մշտական տոկոսադրույք ապահովի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացի այն դեպքերից եթե դրանք ուղղակիորեն վերագրելի են որակավորող ակտիվներին, ինչի դեպքում նրանք կապիտալացվում են համաձայն Ընկերության կողմից փոխառության ծախսումների գծով սահմանված ընդհանուր քաղաքականության: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջաններում, որում դրանք առաջացել են:

Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, եթե որևէ այլ սիստեմատիկ հիմունք ավելի ճշգրիտ չի ներկայացնում վարձակալված ակտիվներից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Եթե գործառնական վարձակալության պայմանագրի կնքման համար ստացվել են խրախուսական հատույցներ, նման հատույցները ճանաչվում են որպես պարտավորություն: Խրախուսական հատույցների ընդհանրացված օգուտը ճանաչվում է որպես վարձավճարի նվազեցում ուղիղ գծային մեթոդով, եթե որևէ այլ սիստեմատիկ հիմունք ավելի ճշգրիտ չի ներկայացնում վարձակալված ակտիվներից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, թղթակցված և ժամկետային ավանդների չսահմանափակված մնացորդները՝ սկզբնապես սահմանված 90 օր կամ պակաս ժամկետայնությամբ, և պայմանագրային պարտավորվածություններից զերծ՝ վարկային հաստատություններից ստացվելիք գումարները:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով, հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները և, որակավորված ակտիվների մասով՝ փոխառության ծախսումները, որոնք կապիտալացվել են համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Նման գույքը դասակարգվում է ըստ հիմնական միջոցների համապատասխան կատեգորիաների, երբ այն ավարտված է և պատրաստ է նպատակային օգտագործման: Այս ակտիվների, ինչպես և այլ գույքային ակտիվների մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն ժամանակ, երբ ակտիվները պատրաստ են իրենց նպատակային նշանակությամբ օգտագործվելու համար:

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս, կամ երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրսբերումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի ապաճանաչումից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է այնպես, որ դուրս գրվի ակտիվների սկզբնական արժեքը, հանած օգտակար ծառայության ընթացքում դրանց մնացորդային արժեքները՝ օգտագործելով գծային մեթոդը: Գնահատված օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բոլոր տեսակի գնահատումներում փոփոխությունների ազդեցությունը հաշվառելով առաջընթաց սկզբունքով: Սեփականության իրավունքով պատկանող հողի նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

	Օգտակար ծառայություն (տարիներ)
Համակարգիչներ	5 տարի
Մեքենաներ	5 տարի
Գրասենյակային գույք և սարքավորումներ	5 տարի
Այլ	5 տարի

Ոչ նյութական ակտիվներ. Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող՝ առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում. Ոչ նյութական ակտիվներն ապաճանաչվում են դրանք օտարելիս, կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուդվիլից: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջում Ընկերությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար, թե արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա ակտիվների փոխհատուցվող գումարը գնահատվում է՝ արժեզրկումից կորուստները որոշելու նպատակով: Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Ընկերությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել ողջամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության համար առնվազն տարեկան մեկ անգամ, ինչպես նաև՝ երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է: Օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով մինչ հարկումը տոկոսադրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է հաշվեկշռային արժեքից ցածր, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչ փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է շահույթում կամ վնասում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչ վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ. Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է ժամանակահատվածի հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է «շահույթ մինչև հարկումը» հասկացությունից՝ եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ. Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստացվի բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային պարտավորությունները և ակտիվները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

ժամանակահատվածի ընթացիկ և հետաձգված հարկեր. Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը, և այդ պարտականության գումարը արժանահավատորեն կարող է չափվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Եթե պահուստը չափվում է՝ օգտագործելով ներկա պարտականության մարման համար գնահատված դրամական հոսքերը, ապա դրա հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է այդ դրամական հոսքերի ներկա արժեքը (այն դեպքերում, եթե ժամանակի մեջ դրամի ազդեցությունն էական է):

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Արտարժութային գործարքներ

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, Ընկերության գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են գործարքի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Ոչ դրամային միավորները, որոնք սկզբնական արժեքով չափվում են արտարժույթով, չեն փոխարկվում:

Փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ այն ժամանակահատվածում, որում դրանք առաջանում են:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները

Ընկերության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս՝ ինչպես նկարագրված է Ծան. 4-ում, Ընկերության ղեկավարությանն անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումները և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ տեղի են ունենում և եթե վերաբերում են միայն այդ ժամանակաշրջանին, կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Հաշվապահական քաղաքականության կիրառմանը վերաբերող կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են Ընկերության ղեկավարության կողմից հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս կատարված կարևոր դատողությունները, որոնք առավել էական նշանակություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ. Ընկերության ղեկավարությունը վերանայել է իր մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվները կապիտալի ապահովման և իրացվելիության չափման տեսանկյունից և հաստատում է, որ Ընկերությունը ունի այդ ակտիվները մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն:

5. Ապահովագրական գործունեության արդյունք

Ապահովագրական գործունեության ողջ արդյունքը, ինչպես ներկայացված է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, բաղկացած է վարկի ապահովագրության դասի գծով ծառայության մատուցումից: Վերաապահովագրությունն իրականացնում է Շվեյցարական վերաապահովագրական ընկերությունը՝ գրանցված Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում: Ընկերությունը շարունակում է զարգացնել իր ապահովագրական ծառայությունների շրջանակը՝ համահունչ իր ռազմավարական առաջնահերթությունների և նպատակների:

6. Զուտ տոկոսային եկամուտ

	2019թ. ապրիլի 1-ից մինչև 2019թ. հունիսի 30-ը ժամանակա-շրջան	2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. մարտի 31-ը ժամանակա-շրջան
Տոկոսային եկամուտ		
Ժամկետային ավանդներ բանկերում	40,038	39,406
ՀՀ պետական պարտատոմսեր	39,475	38,742
Ընդամենը տոկոսային եկամուտ	**79,513**	**78,147**
Տոկոսային ծախսեր		
Հետգնման պայմանագրեր	(15,733)	(15,614)
Ընդամենը տոկոսային ծախսեր	**(15,733)**	**(15,614)**
Զուտ տոկոսային եկամուտ	**63,780**	**62,533**

7. Շահութահարկի գծով ծախս

	2019թ. ապրիլի 1-ից մինչև 2019թ. հունիսի 30-ը ժամանակա-շրջան	2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. հունիսի 30-ը ժամանակա-շրջան (աճողական)
Ընթացիկ հարկի գծով ծախս	(6,293)	(11,397)
Հետաձգված հարկի գծով ծախս(փոխհատուցում)	0	1,699
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**(6,293)**	**(9,698)**

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է շահութահարկի 20% դրույքաչափը: Հետաձգված հարկը հաշվարկված է հիմք ընդունելով է 20% շահութահարկի դրույքաչափը:

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն իրենցից ներկայացնում են տեղական առևտրային բանկերի ընթացիկ հաշիվներում պահվող դրամական միջոցներ:

9. Ժամկետային ավանդներ բանկերում

	2019 թ. Հունիսի 30-ի դրությամբ	2019 թ. մարտի 31-ի դրությամբ
Ժամկետային ավանդներ բանկերում	1,693,341	1,708,900
Հաշվեգրված տոկոսներ	5,181	5,839
Ընդամենը ժամկետային ավանդներ բանկերում	**1,698,523**	**1,714,739**

2019 թ. հունիսի 30 -ի և 2019 թ-ի մարտի 31-ի դրությամբ ժամկետային ավանդները տեղաբաշխված են ՀՀ ռեզիդենտ առևտրային բանկերում:

10. Վաճառքի համար մատչելի և մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ

	2019 թ. հունիսի 30-ի դրությամբ	2019 թ. մարտի 31-ի դրությամբ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
Ֆիքսված տոկոսադրույքով պետական պարտքային արժեթղթեր		
Ընկերության կողմից պահվող	157,926	152,530
Հետգնման պայմանագրերով գրավադրված	676,364	659,191
	834,290	**811,721**
Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ		
Ֆիքսված տոկոսադրույքով պետական պարտքային արժեթղթեր		
Ընկերության կողմից պահվող	467,031	455,362
Հետգնման պայմանագրերով գրավադրված	205,482	199,860
516	**672,513**	**655,222**

11. Հիմնական միջոցներ

	Համակարգչային տեխնիկա	Գրասենյակային գույք	Մեքենա-ներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	**13,743**	**4,021**	**9,680**	**5,599**	**33,043**
Ավելացումներ	1,182	-	-	-	**1,182**
Ներքին տեղաշարժ	-989	-100	-	1,089	**-**
Օտարումներ	-	-	-	-	**-**
2018 թ. դեկտեմբերի 31- դրությամբ	**13,936**	**3,921**	**9,680**	**6,688**	**34,225**
Ավելացումներ	-	-	-	-	**-**
Ներքին տեղաշարժ	-	-	-	-	**-**
Օտարումներ	-	-	-	-	**-**
2019 թ. հունիսի 30-ի դրությամբ	**13,936**	**3,921**	**9,680**	**6,688**	**34,225**
Կուտակված մաշվածություն					
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	**6,325**	**2,441**	**5,100**	**3,867**	**17,732**
Մաշվածության ծախս	442	327	968	1,372	**1,551**
Ներքին տեղաշարժ	3,007	-	-	-3,007	**-**
Օտարումներ	-	-	-	-	**-**
2018 թ. դեկտեմբերի 31- դրությամբ	**10,227**	**3,097**	**7,036**	**3,606**	**23,966**
Մաշվածության ծախս	203	208	968	1,369	**2,748**
Ներքին տեղաշարժ	-	-	-	-	**-**
Օտարումներ	-	-	-	-	**-**
2019 թ. հունիսի 30-ի դրությամբ	**10,430**	**3,305**	**8,004**	**4,975**	**26,714**
Զուտ հաշվեկշռային արժեք					
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	**7,418**	**1,580**	**4,580**	**1,732**	**15,311**
2018 թ. դեկտեմբերի 31 դրությամբ	**3,709**	**824**	**2,644**	**3,082**	**10,259**
2019 թ. հունիսի 30-ի դրությամբ	**3,506**	**616**	**1,676**	**1,713**	**7,511**

12. Ոչ նյութական ակտիվներ3

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	**18,560**	**220**	**18,780**
Ավելացումներ	-	270	**270**
Օտարումներ	**-**	**-**	**-**
2018 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**18,560**	**490**	**19,050**
Ավելացումներ	**-**	**1,425**	**-**
Օտարումներ	-	-	**-**
2019 թ. հունիսի 30-ի դրությամբ	**18,560**	**1,915**	**20,475**
Կուտակված մաշվածություն			
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	**144**	**205**	**349**
Մաշվածության ծախս	36	60	**96**
Օտարումներ	**-**	**-**	**-**
2018 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**180**	**265**	**445**
Ամորտիզացիա	5,026	182	5,208
Օտարումներ	-	-	**-**
2019 թ. հունիսի 30-ի դրությամբ	**5,206**	**447**	**5,653**
Զուտ հաշվեկշռային արժեք			
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	**18,416**	**15**	**18,431**
2018 թ. դեկտեմբերի 31 դրությամբ	**18,380**	**225**	**18,605**

2019 թ. հունիսի 30-ի դրությամբ	**13,354**	**1,468**	**14,822**

13. Ապահովագրական պայմանագրերի պահուստներ

	2019 թ. Հունիսի 30-ի դրությամբ			2019 թ. մարտի 31-ի դրությամբ		
	Համա-խառն	**Վերաապա-հովագրութ-յուն**	**Զուտ**	**Համա-խառն**	**Վերաապա-հովագրութ-յուն**	**Զուտ**
Չվաստակած ապահովագրավճարների գծով պահուստ	37,692	33,934	3,758	30,431	26,567	3,864
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների գծով պահուստ	2,993	-	2,993	1,957	-	1,957
Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ	51,482	46,334	5,148	21,607	19,447	2,160
Հավասարակշռման պահուստ	**1,650**		**1,650**	**1,650**		**1,650**
Ընդամենը ապահովագրական պայմանագրերի պահուստներ	**93,817**	**46,014**	**13,549**	**55,645**	**46,014**	**9,631**

14. Պարտավորություններ վերաապահովագրողի նկատմամբ

	2019 թ. Հունիսի 30-ի դրությամբ	**2019 թ. մարտի 31-ի դրությամբ**
Փոխանցվելիք վերաապահովագրավճարներ	31,669	13,609
Փոխանցվելիք այլ գումարներ		
Ընդամենը	**31,669**	13,609

15. Հետգնման համաձայնագրեր

Ընկերությունն ունի գործարքներ հետգնման համաձայնագրերով: Հետգնման համաձայնագրերով փոխատվության տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Ընկերության կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Ընկերության պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Ընկերության սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել:
2019 թ. հունիսի 30-ի դրությամբ Ընկերության կողմից ֆինանսական հատվածի մասնակիցների հետ ստորագրած հետգնման պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կազմում են 842,440 հազար դրամ (2019 թ.մարտի 31-ի դրությամբ՝ 844,860 դրամ) : Ընկերության ֆինանսական ակտիվների (գրավադրված նշված պարտավորությունների դիմաց) վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ ծանոթագրություն 11:

16. Սեփական կապիտալ

2019 թ. մարտի 31- ի և 2019 թ. հունիսի 30-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում էր 1,500,000 հազ. դրամ: Ընկերության միակ բաժնետերն է Հայաստանի Հանրապետությունը:

Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ Ընկերության կորուստները ծածկելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստը ստեղծվել է Ընկերության կանոնադրության համաձայն, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: 2019 թ. մարտի 31- ի և 2019 թ. հունիսի 30-ի դրությամբ գլխավոր պահուստը կազմում է 450,000 հազ. դրամ՝ այսինքն կանոնադրական կապիտալի 30%-ը:

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են Ընկերության առավելագույն չբաշխված շահույթի գումարով, որը որոշվում է ՀՀ օրենսդրության համաձայն: ՀՀ օրենսդրության համաձայն, հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չի ունեցել բաշխման ենթակա պահուստ սովորական բաժնետոմսերի գծով

17. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտում»* ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները: Ընկերության վերջնական վերահսկող է համարվում Հայաստանի Հանրապետությունը:

Ընկերությունը իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են պետական պարտատոմսերի ձեռքբերում և վերադաս ղեկավարության հատուցումներ: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները և ծախսերը ներկայացվում են ստորև:

Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ
Կապակցված կողմերի հետ այլ գործարքները ներառում են ՀՀ կառավարության հետ գործարքները.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	**2019 թ. Հունիսի 30-ի դրությամբ**	**2019 թ. մարտի 31-ի դրությամբ**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
Ֆիքսված տոկոսադրույքով ՀՀ պետական պարտատոմսեր		
Ընկերության կողմից պահվող	157,926	152,530
Հետգնման պայմանագրերով գրավադրված	676,364	659,191
	834,290	**811,721**
Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ		
Ֆիքսված տոկոսադրույքով ՀՀ պետական պարտատոմսեր		
Ընկերության կողմից պահվող	467,031	455,362
Հետգնման պայմանագրերով գրավադրված	205,482	199,860
	672,513	**655,222**